ԼԳԲՏ ԱՆՁԱՆՇ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տարեկան զեկույց
Հայաստան, 2017թ.

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2017թ.

Կազմվել է Հայաստանում, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի կողմից՝ ԻԼԳԱ-Եվրոպայի աջակցությամբ (հուլիս, 2018թ.)

Շապիկի լուսանկարները՝ Action Studio-ի, «Երջանկություն» սոցիալական գովազդ

Ներածություն

«ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2017թ.» զեկույցն ամփոփում է 2017թ. Փինք Արմենիայի արձանագրած և փաստաթղթավորած դեպքերը, ԼԳԲՏ անձանց հետ անցկացրած հարցազրույցների արձանագրությունները, դատական գործերի, համացանցում և ԶԼՄ-ներում տեղ գտած հրապարակումները:

ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումը զեկույցում ներկայացված է հետևյալ կառուցվածքով.

1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային օրենսդրության այն հիմնական դրույթները, որոնք խախտվել կամ սահմանափակվել են արձանագրված դեպքերում:
2. Կոնկրետ իրավունքների ոտնահարումների արձանագրված դեպքերի ընդհանուր նկարագրությունը:

2017թ. ԼԳԲՏ անձանց դեմ սահմանափակումներն ու խտրական վերաբերմունքը արտացոլվել է հատկապես խոսքի ազատության իրավունքի շրջանակներում:

Մայիսին Երևանի քաղաքապետարանի հրահանգով գովազդային վահանակներից հանվեցին ԼԳԲՏ թեմայով սոցիալական գովազդի պաստառները: Հուլիսին Հայ առաքելական եկեղեցու հորդորով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնից հանվեց ԼԳԲՏ թեմայով երկու ֆիլմ:

2017թ. սեռական կողմնորոշման հիմքով մարդու իրավունքների խախտման արդյունքում մեկ հոգի մահացել է: Տարվա սկզբին Երևանում ինքնասպանություն գործեց ազգությամբ վրացի, ՌԴ քաղաքացի Զուրաբ Նեմսաձեն, որը Հայաստան էր եկել իր ընկերոջ խնդրանքով, որպեսզի փրկի վերջինիս ծնողների ճնշումներից:

2017թ. հանրային քննարկման դրվեց քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որի 197-րդ՝ խտրականության մասին հոդվածում առկա է նաև սեռական կողմնորոշման հիմքով խտրականության արգելքը, սակայն գենդերային ինքնությունը բացակայում է:

Տարվա ընթացքում Փինք Արմենիայում սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով իրավախախտումների 30 դեպք է գրանցվել: Մարդու իրավունքների նկարագրված խախտումները զուգորդվել են խտրականությամբ:

Դեպքերից 8-ը դեռևս գտնվում են ընթացքի մեջ, 14-ի դեպքում իրավական որևէ ընթացք չի տրվել՝ պայմանավորված մի քանի հանգամանքով: Դեպքերից 4-ը կարճվել է, 2-ով քրեական գործ չի հարուցվել՝ տուժող չհայտնաբերվելու պատճառով: Վերջին 2 դեպքերում տուժողը չի ցանկացել բացահայտել իր անձը, այդ պատճառով որևէ դիմում/հաղորդում իրավապահ մարմիններին չի ներկայացվել: Գործերի կարճումը պայմանավորված է եղել տուժողի և իրավախախտի համաձայնությամբ, ինչի արդյունքում վերջինս բողոքը հետ է վերցրել:

Իրավախախտում	30
Ընթացքի մեջ	8
Ընթացք չի տրվել	14
Կարճվել է	4
Գործ չի հարուցվել	2
Դիմում չի ներկայացվել	2

Բողոքարկել չցանկացող անձանցից մեկը գտնվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ, այդ պատճառով, լինելով կախման մեջ զինվորական հրամանատարական կազմից, վախեցել է որևէ բողոք ներկայացնել վերջիններիս գործողությունների դեմ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանակում արձանագրված իրավախախտումները եղել են բացառապես հրամանատարական կազմի կողմից՝ որևէ միջոց մինչ օրս չի ձեռնարկվել կոնկրետ դեպքի քննության և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ որպես առաջնահերթություն դիտարկելով զինծառայողների անվտանգությունը:

Ընթացք չստացածներից 8-ը ընտանեկան բռնության դեպքեր են

Ընթացք չստացածներից 8-ը ընտանեկան բռնության դեպքեր են: Տուժողները չեն ցանկացել բողոք ներկայացնել իրենց ընտանիքի անդամների դեմ: Նման դեպքերում ներգրավվել է Փինք Արմենիայի սոցիալական աշխատողը, որը սոցիալական աջակցություն է տրամադրել թե՛ տուժողներին, թե՛ ընտանիքի անդամներին:

Մնացած դեպքերում տուժողները չեն ցանկացել գործերին ընթացք տալ, քանի որ իրավապահ մարմիններին դիմելու դեպքում իրենց՝ անձնական գաղտնիք հանդիսացող տեղեկության տարածման վտանգ են տեսել, ինչին գումարվել է նաև անվստահությունը համակարգի գործունեության նկատմամբ առ այն, որ իրավախախտը պատասխանատվության կենթարկվի: Այս դեպքերում խնդիրները լուծվել են այլ կերպ. կապ է հաստատվել իրավախատների հետ, կանխվել է իրավախախտումների շարունակականությունը:

Ընթացքի մեջ գտնվող դեպքերից 2-ը վարչական գործեր են, 6-ը՝ քրեական: Քրեական գործերից երկուսը գտնվում են դատարանում, երկուսով նախաքննությունն ավարտվել է, սակայն գործը դեռ դատարան չի ուղարկվել:

Վարչական գործերով հայցվորը Փինք Արմենիան է: Գործերը գտնվում են նախնական դատական քննության փուլում:

ՄԻՊ գրասենյակ դիմել է 2 հոգի

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ դիմել է 2 հոգի, մեկը՝ գրավոր, մյուսը՝ հեռախոսազանգի միջոցով: Երկու դեպքերում էլ խնդիրը կապված է եղել անձնական տվյալները ապօրինաբար տարածելու հետ:

Զեկույցի վերջում զետեղված են Փինք Արմենիայի առաջարկությունները պետական մարմիններին, ՀԼՄ-ներին, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին, որոնց իրականացումը հնարավորություն կտա ապահով միջավայր ստեղծել հասարակության մեջ ԼԳԲՏ անձանց համար, որտեղ նրանք կլինեն հասարակության լիիրավ անդամներ և հնարավորություն կունենան արդյունավետ իրացնելու իրենց իրավունքները և ազատությունները:

1. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու պետության պարտավորությունը

1.1. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն [1]

Անձի կյանքի իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունը ոչ միայն ենթադրում է ուղղակիորեն չմիջամտել դրա իրականացմանը, այլև պաշտպանել մասնավոր անձանց կողմից ոտնձգություններից[2]: Այսինքն, պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը անձի կյանքի իրավունքի միջամտության գործում չի բացառում վերջինիս պատասխանատվությունն իրավունքի խախտման հարցում[3]: Այնուամենայնիվ, կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի այնպես, որ անհամաչափ ծանր բեռ չդրվի իշխանությունների վրա: Երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում կյանքի իրավունքի խախտում կարող է արձանագրվել այն դեպքում, երբ հաստատվի, որ պետությունը իմացել է կամ պարտավոր էր իմանալ տվյալ պահին երրորդ անձանց կողմից անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին և իր լիազորությունների շրջանակներում չի ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ միջոցներ կանխելու անձի կյանքին սպառնացող այդ վտանգը[4]:

Ինքնասպանության հասցնում



2017թ. փետրվարին Փինք Արմենիա էր դիմել Ռուսաստանի քաղաքացի Զուրաբ Նեմսաձեն՝ հայտնելով, որ նա Հայաստան է եկել իր զուգընկերոջ խնդրանքով, որը հալածանքների է ենթարկվում ընտանիքում:

Նեմսաձեի պատմելով՝ խնդիրն առաջացել էր դեռևս 2015թ, երբ նրա զուգընկերոջ մայրը որդու կամքին հակառակ կարդացել էր նրա նամակագրություններն, իմացել էր տղայի սեռական կողմնորոշման մասին ու սպառնացել էր հոգեբուժարան տեղափոխել:

2017թ. հունվարի սկզբին Նեմսաձեն եկել էր Հայաստան՝ զուգընկերոջը հանդիպելու: Զուգընկերոջ ծնողները, իմանալով դրա մասին, վերջինին ենթարկել էին ֆիզիկական բռնության ու սահմանափակել նրա տեղաշարժը՝ սպառնալով, որ եթե շարունակի նման կյանքով ապրել, կմոռանա ընտանիքի մասին:

---

[1] Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[2] Անգելովան և Իլիեվն ընդդեմ Բուլղարիայի Թիվ 55523/00 ՄԻԵԴ վճիռ, § 93
[3] Եվրոպայի խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
[4] Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության ԹԻՎ 23452/94 ՄԻԵԴ վճիռ

Հունվարի 20-ին մոտ, երբ Նեմսաձեն վերադարձել էր Ռուսաստան, զուգընկերը ինքնասպանության փորձ է կատարել՝ դեղեր ընդունելու միջոցով, ինչի արդյունքում նրան տեղափոխել են հիվանդանոց:

Դրանից հետո Զուգընկերը շարունակել է Նեմսաձեին պատմել, որ ծնողներն անընդհատ նվաստացնում են իրեն, ֆիզիկական բռնությամբ նրան թույլ չեն տալիս տնից դուրս գալ, և՛ մայրը, և՛ հայրը հայհոյանքներ պարունակող արտահայտություններ են հնչեցնում իր հասցեին՝ կապված իր սեռական կողմնորոշման հետ, սպառնում են, որ կտեղափոխեն հոգեբուժարան:

Փետրվարի սկզբին Զուգընկերը գրել է Նեմսաձեին՝ խնդրելով, որ օգնի իրեն դուրս գալ այդ վիճակից:

Փետրվարի 9-ին, ենթադրաբար, ծնողների հարկադրմամբ զուգընկերը ոստիկանություն հաղորդում է ներկայացրել այն մասին, որ Նեմսաձեն իր կամքին հակառակ սեռական հարաբերություն է ունեցել իր հետ, տարածել է պոռնկագրական նյութեր՝ իր մասնակցությամբ: Հարուցվել է քրեական գործ:

Փետրվարի 11-ին Անի հյուրանոցի իր համարում Զուրաբ Նեմսաձեին մահացած են հայտնաբերել: Հարուցվել է քրեական գործ՝ Զուրաբ Նեմսաձեին ինքնասպանության հասցնելու հանցակազմով: Գործը գտնվում է նախաքննության փուլում:

Զուրաբ Նեմսաձեի զուգընկերոջ բողոքի հիման վրա հարուցված քրեական գործը հետագայում կարճվել էր նրա մահվան հիմքով, սակայն քննիչը նրա մեղքը հաստատված էր համարել: Փինքի փաստաբանը բողոք էր ներկայացրել քննիչի այդ որոշման դեմ: Դատարանը բավարարել է բողոքը՝ ընդունելով, որ Զուրաբ Նեմսաձեի մեղքը հաստատված չէ: Գործի քննությունը շարունակվում է:

Սպառնալիքներ

ԼԳԲՏ անձանց դեմ տարվող բացասական ու թշնամական քարոզը պատճառ է, որ մարդիկ ամոթից ու խարանից խուսափելու համար թաքցնեն իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Դա առիթ է դառնում, որպեսզի իրավախախտն օգտվի զոհի խոցելիությունից ու սպառնալիքի միջոցով շահագործի նրան:

Բացի այդ, սպառնալիքներ են հնչում ընտանիքներում, երբ ծնողները կամ հարազատները իմանում են անձի սեռական կողմնորոշման մասին՝ վախեցնելով հոգեբուժարան տանել կամ հեռացնել ուսումնական հաստատությունից, սահմանափակել տեղաշարժը և շփումները:

Մյուս դեպքում, ֆիզիկական բռնության սպառնալիքներ են լինում անձանց հասցեին, երբ հանրայնորեն հայտնի է անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, ինչպես նաև սպառնալիքներ են լինում ԼԳԲՏԻ իրավապաշտպան կազմակերպությունների ու իրավապաշտպանների հասցեին:



2017թ. Ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտատեր, Միջազգային համագործակցության գերմանական խնայողական բանկերի հիմնադրամի (Sparkassenstiftung für internationale Kooperation e.V. Armenia) նախկին աշխատակից Տաթև Հովհաննիսյանը Ֆեյսբուքում գրել էր Փինք Արմենիայի հասցեն ու կոչ արել, որ հարձակվեն գրասենյակի վրա: Կոչը դրվատանքի էր արժանացել այլ օգտատերերի կողմից: Տաթև Հովհաննիսյանը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ)

աշխատակիցների համար հանդիպում էր կազմակերպել Փինք Արմենիայի հետ և եղել էր կազմակերպության գրասենյակում: Այնուամենայնիվ, թեև կազմակերպությունը մեկ շաբաթով անցավ արտակարգ ռեժիմով աշխատանքի, հարձակում տեղի չունեցավ:

Փինք Արմենիայում 2017թ ընթացքում գրանցվել է սպառնալիքի 7 դեպք, որոնցում իրավախախտումը կատարվել է կամ ուղղակի սպառնալիքի միջոցով, որպեսզի զոհը բավարարի իրավախախտի ցանկությունները կամ իրավախախտումը ուղեկցվել է նաև սպառնալիքներով: Եվս երկու սպառնալիքով ուղղորդված իրավախախտման մասին հայտնել են լրատվամիջոցները:

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, գեյ զույգի նկարները հայտնվել են կողմնակի անձի մոտ, ով սպառնացել է, որ կտարածի դրանք ու որոշ ժամանակ անց տարածել է:

Մեկ այլ դեպքով կողմնակի անձի ձեռքի տակ է հայտնվել նույնասեռական տղամարդու անձնական նամակագրությունները, որտեղ նա խոսում է իր սեռական կողմնորոշման մասին: Նա սպառնացել է տարածել այդ նամակագրությունները, եթե տուժողը ամսական 30 հազար դրամ գումար չտա:

Մամուլում հրապարկված երկու դեպքում էլ[5] [6] իրավախախտները նկարել են իրենց զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունները և տեսանյութը հրապարակելու սպառնալիքով շարունակաբար խոշոր չափի գումար շորթել:

[5] Տեսանկարահանել է միասեռական սեքսը ու գումար պահանջել չհրապարակելու համար, pastinfo.am, 09.04.17

[6] Երևանում տղամարդը նկարահանել է սեռական հարաբերությունը մեկ այլ տղամարդու հետ և նրանից գումար պահանջել, tert.am, 11.09.17

1.2 Խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 26 մաս 1, ՀՀ Սահմանադրություն [7]

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ եւ գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որեւէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն[8]:

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման[9]: Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը[10]: Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ[11], իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ[12]: Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք

---

[7] Հոդված 26, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[8] Հոդված 1, «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» ՄԱԿ-ի 1984թ.կոնվենցիա
[9] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49
[10] Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ ԹԻՎ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 13134/87 ՄԻԵԴ վճիռ, §30
[11] Այդինն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ
[12] Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով

է համարվում[13]: Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար[14]:

ԼԳԲՏ անձանց իրավիճակը զինված ուժերում

2017թ. Փինք Արմենիան ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնին առաջարկել է հանդիպել՝ զինապարտության տարիքի հասած ԳԲՏ անձանց զորակոչման, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ գործնականում տիրող իրավիճակի խնդրահարույց հարցերը քննարկելու և լուծումներ գտնելու նպատակով՝ բացառելու համար նշյալ ոլորտում ԳԲՏ անձանց հիմնարար իրավունքների խախտման դեպքերը: Սակայն կենտրոնից պատասխանել են, որ Փինքը պետք է կոնկրետ դեպքերը ներկայացնի իրենց, որպեսզի իրենք զբաղվեն այդ հարցով: Կազմակերպությունը, իհարկե, չի կարող տրամադրել ենթադրյալ տուժողների անձը նույնականացնող տվյալներ, քանի որ այդ մարդկանց բացահայտումը վերջինների անվտանգությունը ռիսկի տակ կդնի: Այդ պատճառով համագործակցությունը չստացվեց:

2017թ. Փինք Արմենիան դեպք է գրանցել, երբ հրամանատարական կազմը, խախտելով զինապարտի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, իմացել է նրա սեռական կողմնորոշման մասին: Ըստ Փինքի ստացած տեղեկությունների՝ առողջական խնդիրների պատճառով զինվորական հոսպիտալում գտնվելու ժամանակ նրան այցելել է զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալը և հայտնել, որ տեղյակ են նրա սեռական կողմնորոշման մասին նրա հեռախոսի նամակագրություններից: Այնուհետև զինծառայողից պահանջել են բացատրություն գրել՝ շարադրելով իր հեռախոսում եղած նամակների բովանդակությունը: Ներկա են եղել բուժանձնակազմի ներկայացուցիչներ, զորամասի հրամանատարի նույն տեղակալը և ռազմական ոստիկանության ներկայացուցիչ: Բացատրությունը գրելուց հետո նրան մեկուսացրել են հոսպիտալի սենյակներից մեկում: Հաջորդ օրը տուժածին արձակուրդ են տվել՝ խոստանալով վերադառնալուն պես հրավիրել զինվորական կոմիսիա՝ նրան զորացրելու որոշում կայացնելու համար՝ աղիների վարակի հիմքով: Այդ խնդիրը տուժածի մոտ առկա է եղել, սակայն ոչ այնքան սրված, որ ենթակա չլինի զինվորական ծառայության: Հեռախոսը նրան չեն վերադարձրել՝ հիմնավորելով, որ կատարվում է հետաքննություն:

---

[13] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ թիվ 33985/96 և 33986/96 գործեր

[14] Փիրսն ընդդեմ Հունաստանի թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. զեկույց փաստաթուղթ

1.3. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն [15]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը[16]: Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը[17]՝ որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում[18]: Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում[19]:

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը[20], անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը[21]:

Հարձակումներ տրանսգենդեր անձանց վրա

Փինք Արմենիան ահազանգ է ստացել, որ տրանսգենդեր անձի սեռական ծառայություններից օգտված տղամարդը հրաժարվել է վճարել նախապես պայմանավորված ծառայության գինը: Այնուհետև, դանակը պահելով տրանս անձի վզին՝ ստիպել է, որ հեռանա իր տնից:

Տուժողը դիմել է ոստիկանություն, ինչի հիման վրա քրեական գործ է հարուցվել: Բողոքը ներկայացնելու ժամանակ տուժողը հայտնել էր, որ մտավախություն ունի, որ գործը համապատասխան հանգուցալուծում չի ունենա: Հետագայում գործը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

---

[15] Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[16] Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր
[17] Տես [35] հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
[18] Տես [9]
[19] Y.F. ընդդեմ Թուրքիայի Թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
[20] Տես [38]
[21] Քոնոորսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ

***

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, 4 հոգով ծեծել են տրանսգենդեր անձին, որից հետո տուժածը ոստիկանություն է կանչել: Սակայն, երբ ոստիկանները եկել են, տուժողը վախեցել է բացել դուռը: Հաջորդ օրը տուժածն անձամբ է ներկայացել ոստիկանության բաժին: Բաժանմունքում ոստիկանները ծաղրել են նրան, դրսևորել վիրավորական վերաբերմունք:

Քննիչը տուժածին հորդորել է կեղծ ցուցմունք տալ, մասնավորապես՝ գրել, որ ծեծողներն իր հաճախորդներն են եղել: Տուժածը հրաժարվել է սուտ ցուցմունք տալուց և հեռացել:

Գործը քննվել է, ուղարկվել ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Ծեծողները մեղավոր են ճանաչվել քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի առաջին մասով՝ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, և 322-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ինքնիրավչություն, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

***

Փինք Արմենիայում արձանագրված դեպքի համաձայն, տրանս անձը կանգնած է եղել Կոմայգու տարածքում՝ կնոջ հագուստով: Նրան են մոտեցել 6-7 հոգի: Նրանցից մեկը հայհոյել է ու հարվածել նրա դեմքին և մարմնի այլ հատվածներին: Երբ տուժողն ընկել է, մոտեցել են նաև մյուսները, և բոլորով հարվածներ են հասցրել անձի մարմնի տարբեր հատվածներին: Այս ամենը զուգորդվել է հայհոյանքներով: Ծեծի ենթարկելուց հետո նրանք հեռացել են:

***

Փինք Արմենիա դիմած անձը պատմել է, որ գնացել է Կոմայգի սեռական ծառայություն տրամադրող տրանս անձանց հետ, որտեղ նրանց են մոտեցել անհայտ մարդիկ ու ծեծի են ենթարկել նրանց:

Հարձակումներ սեռական կողմնորոշման հիմքով

Փինք Արմենիայում ստացված բողոքի համաձայն, նույնասեռական տղամարդը ընկերոջ հետ անցնելիս է եղել Հյուսիսային պողոտայով, որտեղ մի քանի երիտասարդներ հայհոյանքներ են հնչեցրել նրանց ուղղությամբ: Տղամարդը մոտեցել և հայհոյանքով պատասխանել է նրանց: Նրանցից մեկը հարվածել է տուժողի դեմքին, այնուհետև բոլորով են սկսել հարվածել նրան: Տուժողը ոստիկանություն հաղորդում է տվել, հարուցվել է քրեական գործ: Սակայն, մտածելով, որ գործը չի բացահայտվի, տուժողը բողոքը հետ է վերցրել:

***

Փինք Արմենիայում ներկայացված պատմության համաձայն, տուժողի զուգընկերը, համագործակցելով ևս երեք հոգու հետ, խաբեության միջոցով կողոպտել են նրան:

Բանն այն է, որ զուգընկերոջ հետ հանդիպելուց հետո նրանց են մոտեցել երեք հոգի ու, ոստիկան ներկայանալով, «խուզարկություն» են իրականացրել և հայտնել, որ զուգընկերը հետախուզման մեջ է, ու կեղծ բերման են ենթարկել:

Խուզարկության ընթացքում տուժողից վերցրել են նրա պլանշետը, լիցքավորման

սարքը, անձնագիրը, գլխարկը, շարֆը, ձեռնոցները, սուպերմարկետի քարտը, Յունի բանկի քարտը և 2700 ՀՀ դրամ:

Տուժողը պահանջել է վերադարձնել իրերը: Խոստացել են, որ շուտով կվերադառնան ու հետ կտան՝ սպառնալով, որ եթե տուժողը իրենց հետևից գնա, նրան նույնպես բերման կենթարկեն:

Տուժողը գնացել է նրանց հետևից ու լսել զուգընկերոջ ծիծաղը: Վերջինս, տեսնելով զուգընկերոջը, ոստիկան ներկայացած անձանց հետ, փախել է: Տուժողը վազել է նրանց հետևից, բռնել ոստիկան ներկայացած անձանցից մեկին: Զուգընկերը, տեսնելով դա, մոտեցել է և հարվածել տուժողի դեմքին:

Երբ զուգընկերը ցանկացել է կրկին հարվածել, ավտոմեքենա է կանգնել, որից իջած անծանոթ անձը բռնել է զուգընկերոջ ձեռքերը: Տուժողը դիմել է ոստիկանություն:

Գործն այժմ գտնվում է դատաքննության փուլում:

***

Փինք Արմենիայում գրանցված ևս մեկ դեպքով, անձի ընկերոջ ծնողները դիմել են ոստիկանություն՝ հայտնելով, որ իր երեխայի ընկերները զբաղված են մարմնավաճառությամբ:

Անձին տարել են ոստիկանության բաժին, բացել են նրա ֆեյսբուքյան էջը, ստորաբաժանման աշխատակիցների ներկայությամբ կարդացել նամակագրությունները՝ կապված սեռական ծառայությունների տրամադրման և իր սեռական կողմնորոշման հետ:

Ոստիկանության բաժնում նրան ծաղրել են, հեգնական, վիրավորական վերաբերմունք դրսևորել: Բացահայտել են անձի տրամադրած սեռական ծառայություններից օգտված անձանց և ձերբակալել:

***

Փինք Արմենիայում դեպք է գրանցվել, երբ գիշերը՝ փողոցով քայլելիս, անձին երկու տղամարդ է մոտեցել ու գոռացել. «Արա, էս էն գոմիկն ա»: Անձը շրջվել է, տղաներից մեկը վազելով հարձակվել է նրա վրա ու ոտքով հարվածել նրա մեջքին:

Այնուհետև տուժողը շրջվել է, ոլորել հարձակում գործած երիտասարդներից մեկի ձեռքը և մարմնով ընկել նրա վրա: Մյուս երիտասարդը փախել է: Տուժողը հենց այդ պահին զանգահարել է ոստիկանություն:

Գործը գտնվում է դատարանում:

***

Ֆեյսբուք սոցիալական ցանցում Albert Sargsyan անունով օգտատերը մեկնաբանություն է գրել, որտեղ նա նկարագրել է հետևյալը. «10 օր առաջ մի հատ գոմիկի տղեքով սատկացրինք նենց արուն լվա արինք որ կանաչ աչքերից մեկը արդեն չկար: Նկարը պահել եմ ով կուզի թո գրի ղրգեմ տեսեք թե ոնց ենք աչգը (աչքը, խմբ.) գտալով (գդալով, խմբ.) հանե: Կարճ ասած ինվալիդ ենք սարքե: Սկի չէր կարում լացեր, աղաչում էր որ էլ չխփենք, վերջում ասինք լավ գոնե պլորն էլ ճզմենք որ ուրիշներին սպիդ չքցի, նենց որ հմի ինքը երևի մի աչքանի կապուտաչյա առանց պլորի ինվալիդ ա»:

Այնուհետև շարունակել է հայհոյախառն արտահայտությունները՝ խոստովանելով, որ առաջին անգամը չէ, որ նրանք նման բան են անում:

Փինք Արմենիան հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, սակայն, տուժող չհայտնաբերելու պատճառաբանությամբ քրեական գործ չի հարուցվել:

ՀԱԵ սպասավորը հրաժարվել է ԼԳԲՏ անձանց պաշտպանող իր տեսակետից

ԱՄՆ Արևմտյան հայոց թեմի հոգևորական Հայր Վազգեն Մովսեսյանը դարձել էր «Հավասարություն Հայաստան» ԼԳԲՏ իրավապաշտպան կազմակերպության խորհրդի անդամ:

Մինչ կազմակերպության խորհրդի անդամ դառնալը Մովսեսյանը KPFK 90.7FM-ի ռադիոեթերում «Հավասարություն Հայաստան»-ի հիմնադրի՝ Արմեն Աբելյանի հետ խոսել էր ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության կարևորության մասին[22]:

Սակայն, Մայր աթոռի ֆեյսբուքյան էջը կաթողիկոսին հասցեագրված նամակ է հրապարակել, որտեղ Վազգեն Մովսեսյանը հերքում է, որ նա նույնասեռական անձանց համախոհ է և «Հավասարություն Հայաստան» կազմակերպության խորհրդի անդամ, ու ամուսնությունն ընդունում է միայն կնոջ և տղամարդու միջև:

Նամակի վերջում Մովսեսյանը կաթողիկոսից ներողություն է խնդրում՝ նրան ավելորդ մտահոգություն պատճառելու համար:

Աբել Աբելյանը Ֆեյսբուքում գրառում էր արել, որ Մովսեսյանի կյանքին սպառնալիքներ են հասցվել:

Նույնասեռական դասախոսի հեռացումը աշխատանքից

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, մի քանի տարի համալսարանում դասավանդելուց հետո, դասախոսին ժամեր չեն հատկացրել դասավանդելու համար:

Նրան է զանգահարել ամբիոնի վարիչը և ասել, որ ռեկտորի հրամանով 2017-2018թթ. ուսումնական տարում նա այլևս դասաժամեր չունի, քանի որ ռեկտորը վատ բաներ է լսել նրա մասին[22]:

Մասնավորապես ասվել է, որ նա «Էրեխեքից հեռու պետք է մնա, և չի ուզում, որ իրենց համալսարանի պատիվը խայտառակվի»:

Տուժածի պնդմամբ՝ աշխատանքից հանելու պատճառն այն է, որ ռեկտորը և ամբիոնի վարիչն իմացել են իր սեռական կողմնորոշման մասին: Վախենալով, որ իր սեռական կողմնորոշման մասին կարող են հայտնել նաև իր ընտանիքին՝ տուժածը ստիպված հեռացել է Հայաստանից:

Ընտանեկան բռնություն

2017թ. Փինք Արմենիան արձանագրել է ընտանեկան բռնության 8 դեպք, որոնցից մեկի արդյունքում նույնասեռական տղամարդ է ինքնասպան եղել (տե՛ս, կյանքի իրավունք բաժնում): Հաճախ ընտանիքներում անձի սեռական կողմնորոշման

[22] http://archive.kpfk.org/mp3/kpfk_171128_001500goharrison.mp3

մասին իմանում են՝ ներխուժելով նրա անձնական տարածք՝ կարդալով նրա նամակագրությունները սոցիալական ցանցերում, հեռախոսներում:

Դեպքեր են լինում, երբ սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը բացահայտելուց հետո անձին վտարում են տնից, այլ դեպքերում տնային կալանքի տակ են պահում, երբեմն զրկում ուսումնական հաստատություն հաճախելուց:

Բացի այդ, ծնողներն իրենց զավակին սպառնում են հոգեբուժարան տանելով, իսկ երբեմն տանում են, եթե նա շարունակում է պնդել, որ նույնասեռական է:

***

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, անձի մորաքույրն ու մայրը, կարդալով սոցիալական ցանցում նրա նամակագրությունները, իմացել են նրա նույնասեռական հարաբերությունների մասին, ինչից հետո նրան տնային կալանքի են ենթարկել՝ զրկելով հաղորդակցման միջոցներից և արգելելով ընկերներին հանդիպել և համալսարան այցելել:

***

Եվս մեկ գրանցված դեպքի համաձայն, անձի ծնողները, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին կրկին ենթարկել են տնային կալանքի, արգելել են ընկերների հետ շփումներն ու սպառնացել են հեռացնել համալսարանից:

***

Ըստ մեկ այլ դեպքի, անձի ծնողները, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, նրան ենթարկել են ֆիզիկական և հոգեբանական բռնության՝ սպառնալով արգելել քոլեջ հաճախել:

Նա հեռացել է տնից ու բնակություն հաստատել ընկերոջ մոտ: Հայրը հանդիպել է զավակի ընկերոջն ու հարվածել նրան:

Նրանք չեն դիմել իրավապահ մարմիններին՝ չցանկանալով խորացնել կոնֆլիկտը:

***

Մեկ ուրիշ ստացված դեպքով, ծնողները, տեղեկանալով զավակի նույնասեռական լինելու մասին, բռնություն են գործադրել, ինչի արդյունքում տուժածը խոստացել է «ուղղվել»:

***

Մեկ այլ ստացված դեպքով, անձի ծնողները, իմանալով զավակի նույնասեռական լինելու մասին, վտարել են տնից ու մերժել են ընդունել նրան, եթե փորձի վերադառնալ:

***

Եվս մի գրանցված դեպքի համաձայն, նույնասեռական անձի եղբայրն, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, տնից դուրս է հանել՝ չթողնելով վերցնել իր անձնական իրերը, ապա փոխել է դռան կողպեքը, որպեսզի նա այլևս տուն չկարողանա վերադառնալ:

***

Ըստ ևս մեկ գրանցված դեպքի, տուժողի եղբայրը, կարդալով նրա հեռախոսի նամակներն, իմացել է նրա սեռական կողմնորոշման մասին ու հայտնել ողջ ընտանիքին, ինչից հետո տուժողի հայրը ֆիզիկական բռնության է ենթարկել նրան ու հայհոյել:

Այնուհետև տուժողից պահանջել է, որ լքի տունը՝ ասելով, որ իրեն այդպիսի զավակ պետք չէ, ինչն էլ վերջինս արել է ու դիմել կազմակերպություն իրեն ապաստան տրամադրելու համար:

Եղբայրը նրա հեռախոսից համարներ է վերցրել ու, զանգահարելով տուժողի ընկերներին և Փինքի աշխատակիցներին, հայհոյել ու սպառնացել է, որ եթե գտնի նրանց, կվերացնի:

1.4. Կարծիքի արտահայտման ազատություն

> *... Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*
>
> *Հոդված 42, ՀՀ Սահմանադրություն* [23]

Խոսքի ազատությունը, որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ:

Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների[24]: Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները[25]: Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն[26]:

Ատելության խոսք է համարվում «...արտահայտման այն բոլոր դրսևորումները, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ատելության այլ դրսևորումներ, ներառյալ, ագրեսիվ ազգայնականությամբ պայմանավորված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների և այլ խմբերի նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը...»[27]:

Երևանի քաղաքապետարանի վերաբերմունքը

2017թ. մայիսի 25-ին Փինք Արմենիան Երևանի կենտրոնի գովազդային վահանակներին ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ հանդուրժողականության թեմայով սոցիալական գովազդային պաստառներ էր տեղադրել: Գովազդային պաստառները տեղադրվել էին «Նուշիկյան ասոցիացիա» գովազդային գործակալության միջոցով: Սակայն, մայիսի 27-ին Երևանի քաղաքապետարանի հրամանով պաստառները հանվեցին:

Ըստ քաղաքապետարանի, հեռացման որոշումը պայմանավորված էր նրանով, որ դրանք տեղադրելու թույլտվություն իրենցից չէին վերցրել: «Նուշիկյան ասոցիացիա»-ից տեղեկացրին, որ գործնականում իրենք թույլտվություն քաղաքապետարանից չեն վերցնում, և չի եղել դեպք, որ քաղաքապետարանը հանի գովազդը, եթե բովանդակության մեջ խախտում չի հայտնաբերվել:

Փինքը «Նուշիկյան ասոցիացա»-ին առաջարկեց դիմել քաղաքապետարանին՝ թույլտվության համար, որպեսզի վերականգնվեն պաստառները, սակայն նրանք հրաժարվեցին:

---

[23] Հոդված 42, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[24] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 34
[25] Էրբականն ընդդեմ Թուրքիայի Թիվ 59405/00 ՄԻԵԴ վճիռ
[26] ՕՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 11
[27] Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի, հանձնարարական Թիվ R 97 «ատելության խոսքի» վերաբերյալ, ընդունված 30 հոկտեմբեր, 1997թ.

Այնուհետև Փինքը փորձեց այլ գովազդային գործակալությունների միջոցով տեղադրել պաստառները, սակայն բոլորը հրաժարվեցին:

Այս գործով Փինք Արմենիան Երևանի քաղաքապետարանի դեմ վարչական դատարան հայց է ներկայացրել՝ քաղաքապետարանի գործողությունները հայցվորի արտահայտման ազատության և խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու և գովազդները վերականգնելու համար միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Մշակույթի նախարարության վերաբերմունքը

2017թ. Փինք Արմենիան դիմել էր Մշակույթի նախարարություն, որպեսզի ԼԳԲՏ մարդկանց հանդեպ հանդուրժողականության թեմայով գովազդային պաստառները և տեսահոլովակները սոցիալական ճանաչեին:

Մշակույթի նախարարությունը մերժել է գովազդները սոցիալական ճանաչելու դիմումը՝ հիմնավորելով, որ հասարակությունը տեղեկացված է «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում ունեցող անձանց գոյության մասին, որ գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում: Դիմումը մերժելու պատճառներից է նաև գովազդներում առկա պատվիրատուի QR կոդերը, համացանցի հասցեները:

Այսպիսով, սոցիալական գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին կից ստեղծված հանրապետական հանձնաժողովը 0 կողմ, 0 ձեռնպահ և 11 դեմ ձայնով մերժել է գովազդները սոցիալական ճանաչելու դիմումը:

Փաստի առիթով Փինք Արմենիան դիմել է վարչական դատարան՝ մշակույթի նախարարության գործողությունները հայցվորի արտահայտման ազատության և խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու և գովազդները սոցիալական ճանաչելուն պարտավորեցնելու պահանջով:

«Ոսկե ծիրան» կինոփառատոնից ֆիլմերի հեռացումը

«Ոսկե ծիրան» 14-րդ միջազգային կինոփառատոնը ԼԳԲՏ անձանց մասին «Լսիր ինձ. չպատմված պատմություններ» վավերագրական ֆիլմը և տրանսգենդեր անձանց թեմայով «Ծիրանի այգիներ» խաղարկային ֆիլմն ընդգրկել էր արտամրցութային ծրագրում: Ամբողջ ծրագիրը պետք է ցուցադրվեր Կինեմատոգրաֆիստների միությանը պատկանող Հենրիկ Մալյանի անվան թատրոնում:

Փառատոնի բացումից մի քանի օր առաջ սոցիալական ցանցերում և որոշ լրատվա-

միջոցներում ֆիլմերի շուրջ աղմուկ բարձրացավ: Մի խումբ մարդիկ կոչ էին արել զանգել «Ոսկե ծիրան», Կինեմատոգրաֆիստների միություն, Երևանի քաղաքապետարան և մշակույթի նախարարություն՝ պահանջելով արգելել ֆիլմերի ցուցադրությունները: Արդյունքում Կինեմատոգրաֆիստների միությունը հրաժարվեց ցուցադրել ամբողջ ծրագիրը:

Փառատոնի բացման մամուլի ասուլիսի ժամանակ «Ոսկե ծիրան»-ի տնօրեն Հարություն Խաչատրյանն ասաց, որ Կինեմատոգրաֆիստների միությունից իրենց ասել են, որ այսպիսի սգի մեջ չեն կարող նման ծրագիր ցուցադրել (նկատի ունենալով՝ Կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցի մահը փառատոնի բացումից երկու շաբաթ առաջ, խմբ.)[28]: Այդուհանդերձ, Հարություն Խաչատրյանը հրաժարվեց ծրագիրը այլ տարածքում ցուցադրելու առաջարկությունից:

Փառատոնի բացման ժամանակ մի խումբ մարդիկ ֆիլմերի ցուցադրման դեմ ցույց էին արել՝ «Ոչ այլասերման քարոզին» գրությամբ պաստառներով[29]:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Հայ առաքելական եկեղեցին է Ոսկե ծիրանին հորդորել ֆիլմերը հեռացնել փառատոնից, ինչը և արվել է[30]:

«Ծիրանի այգիներ» ֆիլմը

Իրանցի ռեժիսոր Փուրիա Հեյդարին Հայաստանի ազգային կինոկետրոնի հետ համագործակցությամբ նկարահանել է հայ-իրանական համատեղ արտադրության «Ծիրանի այգիներ» ֆիլմը, որը պատմում է տրանս անձի մասին: Կինոկենտրոնին գումարը վճարելուց և սցենարը հաստատելուց հետո ունեցել են ստորագրած պայմանագիր՝ համաձայնի որի, կինոկենտրոնի միջոցով ֆիլմը պետք է ցուցադրվեր Հայաստանի կինոթատրոններում:

Սակայն, Հեյդարին պատմել է, որ կինոկենտրոնը չի կատարել պայմանագրի կետերը, հրաժարվել է կազմակերպել ցուցադրություններ և ներկայացնել ֆիլմը կինոփառատոներին, քանի որ ֆիլմը տրանս անձանց մասին է: Կինոկենտրոնը նաև հրաժարվել է, որ իրենց անունը նշվի ֆիլմում:

Ֆիլմի ցուցադրության համար Հեյդարին դիմել է կինոթատրոններին, սակայն դրանք տարբեր պատճառաբանություններով հրաժարվել են ցուցադրել այն:

---

[28] Կինոմիության նոր ղեկավարները հրաժարվեցին «Ոսկե Ծիրանի» ԼԳԲՏ համայնքի մասին պատմող ֆիլմերը ցուցադրել. Հարություն Խաչատրյան, tert.am, 07.07.17
[29] «Ոսկե ծիրան»-ը մեկնարկել է ակցիայով. լուսանկարներ, a1plus.am, 07.09.2017
[30] Մայր Աթոռն է հորդորել «Ոսկե ծիրանին» չցուցադրել ԼԳԲՏ անձանց մասին ֆիլմերը, epress.am, 13.07.2017

1.5. Խտրականության և ատելություն սերմանող խոսքից զերծ մնալու իրավունք

> *Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:*
>
> *Հոդված 29, ՀՀ Սահմանադրություն* [31]

Ատելություն և անհանդուրժողականություն պարունակող խոսքի արգելքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից նման խոսքի տարածման արգելքը, այլև պարտականություն ձեռնարկելու համապատասխան միջոցներ, որպեսզի նման խոսքը երրորդ անձանց կողմից չխրախուսվի[32]*: Այս առիթով պետության պարտականությունն է ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ կանխելու անձանց նկատմամբ անհանդուրժողականության և ատելության որոշակի հարթակներում, որոշակի ձևերով և բովանդակությամբ սերմանումը:*

ԼԳԲՏ անձանց դեմ ատելության չափաբաժինը շատացավ ԼԳԲՏ թեմայով սոցիալական գովազդների հեռացումից և «Ոսկե ծիրան» 14-րդ միջազգային կինոփառատոնից «Լսիր ինձ. չպատմված պատմություններ ատելությունից անդին» և «Ծիրանի այգիներ» ֆիլմերը հանելուց առաջ և հետո:

Մի շարք լրատվամիջոցներ և լրագրողներ նպաստել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությանը, ընդհուպ մինչև սոցիալական գովազդների ապամոնտաժմանն ու «Ոսկե ծիրան»-ից ԼԳԲՏ թեմայով ֆիլմերի հեռացմանը:

Մասնավորապես, irates.am-ի լրագրող Արթուր Հովհաննիսյանը թե՛ Ֆեյսբուքում, թե՛ մամուլում կոչ էր արել զանգել «Ոսկե ծիրան», Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն, Երևանի քաղաքապետարան և մշակույթի նախարարություն՝ պահանջելով, որ ֆիլմերը հանվեն: Իսկ հանրային հեռուստատեսության լրագրող Լևոն Սարդարյանն այսպիսի գրառում էր արել իր Ֆեյսբուքի էջում. «Ես ինքս դեմ էի, որ Ոսկե ծիրանում էն երկու ֆիլմը գնա: Բայց էդ թեմայով մի բառ էլ չեմ ասել ու, առավել ևս, ոչ մեկի դեմքին չեմ ցրթել, չէ? Բա էդ ո՞նց եղավ, որ հիմա ամեն դալբագնոմիկ իրեն իրավունք ա վերապահում ինձ ու ինձ պես մտածողներին որակի որպես հետադիմական, իսկ առիթի դեպքում հլը մի հատ էլ քֆուր անի:

[31] Հոդված 29, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[32] Օզգուր Գյունդեմն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23144/93 ՄԻԵԴ վճիռ

Արա, տուտուզներիդ էնքան կճտտացնեմ՝ կդառնան Փինք Արմենիայի ֆիլիալ: Ձեզ խելոք պահեք»[33]:

Բացի այն լրատվամիջոցներից, որոնք տարիներ շարունակ ԼԳԲՏ անձանց դեմ նյութեր են հրապարակում, ատելության և խտրականության կոչերին են լծվել նաև մի շարք փաստաբաններ՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորությամբ, որը 2017թ. մի քանի անգամ ցույց է տվել, որ խտրական վերաբերմունք ունի ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Զոհրաբյանը, մեկնաբանելով «Ոսկե ծիրան» փառատոնից ԼԳԲՏ անձանց մասին ֆիլմերի հեռացումը (տե՛ս կարծիքի արտահայտման իրավունք բաժնում), ասել է, որ ԼԳԲՏ անձանց բացասական է վերաբերվում, և երեխայի իրավունքների մասին օրենքով ու քրիստոնեության միջոցով է հիմնավորել իր գոհունակությունը, որ ֆիլմերը հեռացվել են փառատոնից[34]:

Զոհրաբյանը ԼԳԲՏ անձանց նկատմամբ իր խտրական վերաբերմունքը ևս մեկ անգամ արտահայտել է քրեական նոր օրենսգրքի նախագծի՝ խտրականության մասին 197-րդ հոդվածի դեմ խոսելիս, քանի որ նրան դուր չի եկել, որ հոդվածով արգելվում է սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը: Նա ասել է. «Կարող է մարդիկ լինեն, ովքեր որոշեն գոմաղբ ուտել ու սկսեն շարժումներ: Օրինակ՝ գոմաղբ ուտող-ների միություն ստեղծեն, փողոց դուրս գան, գնան դպրոցներ ասեն՝ ճիշտն այսպես է եւ փորձեն քարոզ անել»[35]:

Հումորային հաղորդումները ևս անմասն չեն նման կոչերից: Դերասան և կատակերգու Հովհաննես Դավթյանը, որի Ֆեյսբուքի էջը 91 հազարից ավելի հավանում ունի, իսկ Յութուբի ալիքը՝ 21 հազարից ավելի գրանցում, իր մանրապատումներում ժամանակ առ ժամանակ անդրադառնում է թեմային՝ վիրավորելով և ատելություն սերմանելով ԼԳԲՏ մարդկանց հանդեպ:

Յութուբի մոտ 80 հազար դիտում ունեցող տեսանյութում հումորիստը տրանսգենդեր անձանց անվանում է կապիկ, սոպլյակ (փսլնքոտ), թուլա՝ մեղադրելով պետության ղեկավարներին ու ոստիկանությանը, որ չեն վերացնում նրանց[36]:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ պետական պաշտոնյաների վերաբերմունքը

Պետական պաշտոնյաների առումով 2017թ. միտում է նկատվել, որ խուսափում են անդրադառնալ հարցին, ի տարբերություն նախորդ տարիներին, երբ հստակ բացասական վերաբերմունք էին արտահայտում: Պետական պաշտոնյաներից ոմանք խոստովանել են, որ ԼԳԲՏ թեմայով հարցերին ուղիղ չեն պատասխանելու:

2017թ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող 9 քաղաքական ուժերից նախընտրական ծրագրում ԼԳԲՏ անձանց հարցին անդրադարձել էր միայն կոմու-նիստական կուսակցությունը: Ծրագրում այդ կետը շարադրված էր այսպես. «Հետևողական պայքար մղել Հայաստանի Հանրապետությունում տարատեսակ «արևմտյան» նորահայտ երևույթների՝ համասեռամոլության, միասեռական ամուս-նությունների, տրանսգենդերության և մեր ժողովրդի հոգեկերտվածքին և ավան-դույթներին խորթ այս դրսևորումների դեմ»:

---

[33] Հանրային հեռուստատեսության լրագրողի գրառումը
[34] Այլասերվածների և այլասերվածության մասին ֆիլմերի ցուցադրումը նաև անչափահասների շրջանում արգելված է օրենքով, nt.am, 13.07.2017
[35] Արա Զոհրաբյանը նույնասեռականների խտրականության մասին. «Կարող է գոմաղբ ուտողների միություն ստեղծեն ու քարոզեն՝ ճիշտն այսպես է», aravot.am, 28.09.2017
[36] Հովհաննես Դավթյանի մանրապատումը

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին հարցաշար էր ուղարկել: Ի թիվս այլ հարցերի, նրանցից հետաքրքվել էին, թե արդյոք իրենք համաձայն են, որ նույնասեռական անձինք պետք է ունենան նույն իրավունքներն, ինչ մյուս քաղաքացիները:

9-ը ուժերից միայն չորսն էին պատասխանել հարցաշարին՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, «Ելք» դաշինքը, «ՕՐՕ» դաշինքը և «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը:

Բոլոր ուժերն էլ «այո» էին պատասխանել վերը նշված հարցին: Սակայն, Հայ հեղափոխական դաշնակցության հաղորդակցության և հանրային կապերի պատասխանատու Գայանե Մանուկյանը վրդովվել էր[37], երբ իմացել էր, որ հարցերի պատասխանները հանրայնացվել են, իսկ LGBTnews.am-ի հարցին, թե «այո» պատասխանելով, իրավունքների ամրագրման ինչպիսի՞ ծավալ նկատի ունի կուսակցությունը, Մանուկյանն ասել է, որ այդ անձինք ունեն քվեարկելու իրավունք:

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյան

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը խուսափում է խոսել ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների մասին:

LGBTnews.am-ին տված հարցազրույցում[38] դատախազ Կոստանյանը, պատասխանելով հարցին, թե արդյոք խտրական վերաբերմունք չի տեսնում Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ասել է, որ այդ թեմային չի տիրապետում և չէր ցանկանա խոսել դրա մասին:

Լրագրողի նկատառմանը, որ կասկածում է, թե Կոստանյանը չի տիրապետում հարցին, դատախազը՝ ժպտալով ասել է. «Դե, հիմա ես այսպես եմ պատասխանում»:

Պատգամավոր Միհրան Հակոբյան

ՀՀԿ-ական պատգամավոր Միհրան Հակոբյանը LGBTnews.am-ի հետ հարցազրույցում ևս հայտնել է, որ ԼԳԲՏ անձանց խնդիրներին չի տիրապետում[39]:

ԱԺ Եվրոինտեգրման հանձնաժողովի անդամ Հակոբյանը՝ ԼԳԲՏ թեմայով լրագրողի հարցերից խուսափելու համար, հարցազրույցի ժամանակ ասել է. «Դուք որքան էլ այդ հարցն ինձ ուղիղ տաք՝ ես դրան ուղիղ չեմ պատասխանելու»:

Պատգամավոր Նաիրա Կարապետյան



ՀՀԿ-ական մեկ այլ պատգամավոր, նույնպես ԱԺ Եվրոինտեգրման հանձնաժողովի անդամ, ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության անդամ Նաիրա Կարապետյանի կարծիքով ԼԳԲՏ մարդիկ իրենք են խնդիրներ հորինում[40]:

---

[37] Ի՞նչ է նկատի ունեցել դաշնակցությունը՝ «այո» պատասխանելով, LGBTnews.am, 31.03.2017
[38] Գևորգ Կոստանյանը համալրեց «թեմային չտիրապետողների» շարքը, LGBTnews.am, 24.03.2017
[39] Ոլորտը չեմ ուսումնասիրել, կարծիք չունեմ. ՀՀԿ-ական պատգամավոր, LGBTnews.am, 23.10.2017
[40] ՀՀԿ-ական պատգամավոր Նաիրա Կարապետյանի կարծիքով՝ ԼԳԲՏԻ-ները հենց իրե՛նք են խնդիրներ հորինում, ապա՝ պայքարում դրանց դեմ, LGBTnews.am, 10.20.2017

LGBTnews.am-ի հարցին՝ արյդոք պատգամավորը Հայաստանում սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունք չի նկատում, Կարապետյանը պատասխանել է. «Սեռական փոքրամասնությունները Հայաստանի Հանարպետությունում, կարծում եմ, իրենք իրենց համար խնդիրներ են ստեղծում, իրենք իրենց համար խնդիրներ են հորինում, հետո սկսում պայքարել դրանց դեմ»: Այնուհետև հրաժարվել է շարունակել հարցազրույցը:

Պատգամավոր Ռուզաննա Մուրադյան

ՀՀԿ-ական պատագամավոր Ռուզաննա Մուրադյանը, որը 2015թ. LGBTnews.am-ին տված հարցազրույցում ասել էր, որ ԼԳԲՏ անձանց իրավունքները մարդու իրավունք չի համարում, 2017թ. իր ղեկավարած «Կրթություն առանց սահմանի» հասարակական կազմակերպության շրջանակներում ձեռնարկ էր տպագրել, թե ինչպես դպրոցականները պետք է հանդուրժողականություն ցուցաբերեն սեռական փոքրամասնությունների նկատմամբ:

Այս առիթով, LGBTnews.am-ը ևս մեկ անգամ զրուցել է Մուրադյանի հետ՝ պարզելու, թե արդյոք փոխվել է նրա վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ[41]: Պատգամավորն ասել է, որ նա այս թեմայով որևէ մեկնաբանություն չի տալիս: Իսկ լրագրողի հարցին, թե ինչու, ասել է. «Ես պահպանողական եմ, ինձ այդ հարցերով մի՛ դիմեք»:

Պատգամավոր Սուրեն Մանուկյան

Հայ հեղափոխական դաշնակցության պատգամավոր Սուրեն Մանուկյանը «նորմալ աչքով» չի նայում ԼԳԲՏ անձանց:

LGBTnews.am-ին տված հարցազրույցում նա կարծիք է հայտնել, որ ժողովուրդը նույնպես պատրաստ չէ «նորմալ աչքով» նայելու ԼԳԲՏ մարդկանց[42]: Իսկ դեմ, թե կողմ կքվեարկի ԼԳԲՏ մարդկանց իրավունքներն իրացնելու վերաբերյալ օրինագծերին, նա չգիտի:

Պատգամավոր Վարդան Բոստանջյան

Բարգավաճ Հայաստան խմբակցությունից պատգամավոր Վարդան Բոստանջյանը, որը նաև ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, անդրադառնալով «Ոսկե ծիրան» կինոփառատոնից ԼԳԲՏ թեմայով ֆիլմերի հեռացմանը (տե՛ս կարծիքի արտահայտման իրավունք բաժնում), «Իրավունք» թերթին տված հարցազրույցում ասել է. «Իզուր եք այդ հարցն ինձ տալիս: Ահավոր վատ եմ վերաբերվում: Գուցե հետամնաց ու նահապետ մարդ եմ: Կուլտուրայից դրդված՝ այլ բառեր չեմ ուզում ասել: Չեմ հաս-

[41] Ես պահպանողական եմ, ինձ այդ հարցերով մի՛ դիմեք. ՀՀԿ-ական Ռուզաննա Մուրադյան, LGBTnews.am 19.09.2017

[42] ՀՅԴ-ական պատգամավորը «նորմալ աչքով չի նայում» ԼԳԲՏԻ մարդկանց, LGBTnews.am, 19.11.2017

կանում՝ ով է խթանում, ով է նպաստում, ֆինանսավորում, փող տալիս: Բայց բոլոր դեպքերում, հայ ժողովուրդը... գոնե ես մեռնեի, նոր իմանայի, որ արվամոլություն կա»[43]:

Պատգամավոր Մանե Թանդիլյան

«Ելք» խմբակցությունից պատգամավոր Մանե Թանդիլյանի կարծիքով ԼԳԲՏ մարդկանց խնդիրները դեռևս օրակարգային չեն[44]:

Ըստ նրա, նախ հանրությունը և պետությունը պետք է պատրաստ լինեն պաշտպանել մարդու հիմնարար իրավունքները ու չպետք է որևէ «արհեստական» օրենք ներդնել:

LGBTnews.am-ի հարցին, թե ինչպես նա կքվեարկի, եթե ԱԺ-ում ԼԳԲՏ անձանց ամուսնությունը կարգավորող օրենքի նախագիծ լինի, նա պատասխանել է. «Ես կմտածեմ այդ մասին, եթե դա լինի օրակարգային հարց. ես չեմ կարծում, որ այդ հարցը մեր հանրության համար այս պահին օրակարգային է»:

Երևանի քաղաքապետարանի պաշտոնյա Արազ Բաղդասարյան

Երևանի քաղաքապետարանի որոշմամբ ԼԳԲՏ անձանց հանդեպ հանդուրժողականություն սերմանող գովազդները ապամոնտաժելուց հետո (տե՛ս կարծիքի արտահայտման իրավունք բաժնում) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդվազդի վարչության պետ Արազ Բաղդասարյանը մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողներին հորդորել է այլևս այս թեմայով իրեն հարցեր չտան՝ ասելով. «Չեմ ուզում, որ իմ միջոցով ցանկացած նոր խոսակցություն լինի այս թեմայի շուրջ, որովհետեւ կարծում եմ, լինելով գովազդի մասնագետ, մեր այսպիսի քննարկումները ավելի շատ են գովազդում այն, ինչ որ գաղտնի է, կամ եթե 3 տեղ քաղաքում փակցված լիներ: Դրա համար, ներողություն եմ խնդրում, այս թեմային այլևս չեմ անդրադառնալու»[45]:

---

[43] «Իրավունք». Գոնե մեռնեի, նոր իմանայի, որ Հայաստանում արվամոլություն կա. Վարդան Բոստանջյան, tert.am, 07.07.17

[44] Չեմ կարծում՝ հարցն այս պահին օրակարգային է. Մանե Թանդիլյանը՝ նույնասեռ ամուսնությունների մասին, LGBTnews.am, 03.11.2017

[45] Քաղաքապետարանի պաշտոնյան ԼԳԲՏ թեմայով պաստառի մասին. «Այս քննարկումներն ավելի շատ են գովազդում», aravot.am, 29.05.2017

2. Անձի իրավունքներն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտականությունը

*«Ոսկե ծիրան» միջազգային փառատոնը մեզանում դարձել է բարձր ճաշակի, ճշմարիտ արվեստի, ինչպես նաև **խաղաղասիրության ու մարդասիրության գաղափարների կրող և մունետիկ**», — այս խոսքերն ասել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Ոսկե ծիրան» 14-րդ միջազգային կինոփառատոնի փակման արարողության ժամանակ՝ փառատոնից ԼԳԲՏ թեմայով երկու ֆիլմերի հեռացման ֆոնին (տե՛ս կարծիքի արտահայտման իրավունք բաժնում):*

Առաջին անգամ չէ, երբ Հայաստանում ԼԳԲՏ անձանց դեմ ոտնձգությունների ֆոնին Սերժ Սարգսյանը խոսում է մարդասիրությունից ու հանդուրժողականությունից, ինչից կարելի է ենթադրել, որ իշխանության համար մարդասիրությունը տարածվում է ՀՀ ոչ բոլոր քաղաքացիների վրա, ինչը հակասում է անձի իրավունքներն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտավորության դրույթին՝ տուրք տալով ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքին:

Թեև ՀՀ սահմանադրությամբ արգելվում է խտրականությունը (հոդված 29), սակայն օրենսդրահիրավական բացերը թույլ չեն տալիս ԼԳԲՏ անձանց իրացնել իրենց իրավունքները:

2017թ. քննարկման բերվեց քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որի 197-րդ հոդվածի առաջին մասը շարադրված է այսպես. «Խտրականությունը՝ մարդու իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, առողջական վիճակից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշումից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը ութանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Հոդվածում բացակայում է գենդերային ինքնության հիմքով խտրականության դրույթը: Այդուհանդերձ, այս հոդվածի դեմ արդեն արտահայտվել են ԼԳԲՏ մարդկանց դեմ պայքարող խմբերը, ինչպես նաև փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը: Իշխանությունը պետք է հիմնվի անձի իրավունքներն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտականությանը, հակառակ դեպքում՝ հետևելով ԼԳԲՏ անձանց դեմ արտահայտվողներին, կտապալի իր այդ պարտականությունը:

[46] «Ոսկե ծիրան»-ի կողմից ԼԳԲՏ թեմայով ֆիլմերն արգելելու ֆոնին Սերժ Սարգսյանը խոսում է մարդասիրությունից, epress.am, 08.02.2017

Եզրակացություն

2017թ. ևս իշխանությունները ցույց տվեցին իրենց անտարբերությունը ԼԳԲՏ անձանց համար ապահով միջավայր ու ապահով պետություն ստեղծելու գործում: Դրան գումարվեց, ի թիվս՝ մշակույթի նախարարության, Երևանի քաղաքապետարանի, նաև պետական որոշ մարմինների միջամտությունը, որպեսզի ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքներն էլ ավելի ոտնահարվի: Իսկ Պաշտպանության նախարարությունը, չընդունելով Փինք Արմենիայի առաջարկը, որ համատեղ ջանքերով փորձեն ԼԳԲՏ անձանց խնդիրների լուծումներ գտնեն զինված ուժերում, ցույց տվեց, որ մտահոգված չէ ԼԳԲՏ զինծառայողների արժանապատիվ ծառայությամբ:

Թեպետ նախորդ տարիների համեմատ պետական պաշտոնյաների հռետորաբանության մեջ փոփոխություն էր նկատվում այն առումով, որ ատելության քարոզի փոխարեն պարզապես խուսափում էին խոսել ԼԳԲՏ անձանց մասին, այդուհանդերձ իրենց գործողություններով ցույց տվեցին, որ ԼԳԲՏ անձանց տարանջատում են հասարակության այլ խմբերից, ու որ ԼԳԲՏ մարդիկ չեն կարող իրենց խոսքով դիմել հանրությանը:

Այս ամենի հետ մեկտեղ՝ իշխանական օղակում կան մարդիկ, որոնք չեն հավատում կամ տեղյակ չեն, որ Հայաստանում ոտնահարվում են ԼԳԲՏ մարդկանց իրավունքները:

Ընդդիմադիր գործիչները ևս խուսափում են ԼԳԲՏ մարդու իրավունքների հարցերը օրակարգ բերելուց:

2017թ. արտառոց էր նաև Հայ առաքելական եկեղեցու միջամտությունը ԼԳԲՏ անձանց դեմ: Բացի այն, որ հայտնի էր Հայ առաքելական եկեղեցու բացասական դիրքորոշումը ԼԳԲՏ անձանց հանդեպ, 2017թ. եկեղեցին իր որոշումներով միջամտեց հասարակական և մշակութային կյանքին՝ չթողնելով, որ ԼԳԲՏ մարդիկ օգտվեն իրենց կարծիքի արտահայտման իրավունքից, ինչպես նաև բացահայտվեց իր սպասավորների նկատմամբ ճնշումների գործադրումը, երբ նրանք իրենց աջակցությունն են հայտնում ԼԳԲՏ անձանց:

ԼԳԲՏ անձանց մասով օրենսդրահիրավական կարգավորումների բացակայության պատճառով հասարակության որոշ շերտի մոտ տպավորություն է, թե կարող են հարձակումներ գործել ԼԳԲՏ անձանց վրա, սպառնալ նրանց կամ խաբել, բռնության ենթարկել ընտանիքում ու զրկել խոսքի իրավունքից: Դրան նպաստում է նաև ԼԳԲՏ անձանց նկատմամբ համատարած բացասական վերաբերմունքը, որը սրում են նաև պետական պաշտոնյաները, եկեղեցին, որոշ լրատվամիջոցներ և որոշ փաստաբաններ, ինչպես նաև հանրությանը հայտնի որոշ մարդիկ:

Առաջարկություններ

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին՝

- Դադարեցնել պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց վիրավորող, նրանց նկատմամբ ատելություն և խտրականություն սերմանող հայտարարությունները: Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փակ հաստատություններում ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ապահովելու, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը կանխելու, իսկ նման դեպքերում՝ պատշաճ քննություն իրականացնելու համար: Խնդիրը վերացնելու համար չխուսափել իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցությունից:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը կանխելու համար, այդ թվում՝ ոստիկանության և դատախազության մարմիններում ծառայողների, դատավորների վերապատրաստումների, իրազեկումների և այլ միջոցներով:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:
- Խրախուսել ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց, ինչպես նաև ականատեսներին հաղորդել կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ:

- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը:
- Չխուսափել ԼԳԲՏ մարդու իրավունքների ոտնահարումներից խոսել ու ծանոթանալ իրավիճակին: Խնդիրը դարձնել օրակարգային:

Զանգվածային լրատվության միջոցներին՝

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Միջոցներ ձեռնարկել խմբագրություններում, որպեսզի ատելության խոսքեր ու կոչեր տարածող լրագրողները դադարեցնեն նման վարքը:
- Դադարեցնել միակողմանի հրապարակումները՝ միայն ԼԳԲՏ անձանց դեմ պայքարող խմբերին խոսք տալը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Հավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:

Հավելված 1

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականություն

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ *խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է*[46]*:*

Խտրականությունը գործողություն է, անգործություն կամ կարգավորում, որն արտահայտվել է անձի իրավունքների և ազատությունների տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական, կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից՝ իրական կամ ենթադրյալ[47]:

Խտրականության տեսակներն են՝ ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը, սեգրեգացիան, վիկտիմիզացիան և զուգորդված (ասոցացված) խտրականությունը[48]:

ՄԻԵԴ-ի՝ Նաչովան ընդդեմ Բուլղարիայի և Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի որոշումներով տրված մեկնաբանության համաձայն՝ խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի եւ որևէ ողջամիտ բացատրության, այսինքն, երբ միջոցները չեն հետապնդում իրավաչափ նպատակ և չկա ողջամիտ համաչափություն միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև[49]: Վեյդելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի որշման մեջ ՄԻԵԴ-ը սահմանել է, որ անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը նույնքան խնդրահարույց է, որքան ռասայի, ծագման, մաշկի գույնի հիմքով խտրականությունը[50]:

Չնայած խտրական վերաբերմունքն արգելող մեծաքանակ նորմերի առկայությանը, դրանցից ոչ մեկը ուղղակիորեն չի արգելում սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը[51], ու նաև դրա հետևանքով

---

[46] ՀՀ Սահմանադրություն, 2015թ, փոփոխություններով, հոդված 29

[47] «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 2018թ,, հոդված 4, 1-ին մաս

[48] «Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը» իրավագիտական հետազոտություն, Երևան, 2015, էջ 12, «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 2018թ,, հոդված 4, 2-րդ մաս

[49] Նաչովան և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի, 06.07.2005, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, 02/10/2012, §199

[50] Վեյդելանդը եւ այլոք ընդդեմ Շվեդիայի, թիվ 1813/07, 09.02.2012թ.

[51] Խտրականության արգելք և օրենքի առջև հավասարության իրավունքն են սահմանում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվեցիան (հոդված 14), ՀՀ քաղաքացիական (հոդված 3), ՀՀ քաղաքացիական դատավարության (հոդված 11), ՀՀ քրեական (հոդված 6) ՀՀ քրեական դատավարության (հոդված 8) օրենսգրքերը և մի շարք այլ իրավական ակտեր, տե՛ս՝ «Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը» իրավագիտական հետազոտություն, Երևան, 2015, էջ 10-11

Է, որ ԼԳԲՏ անձինք տարբերակված վերաբերմունքի են արժանանում թե՛ իրենց իրավունքների իրացման, թե՛ խախտված իրավունքները վերականգնել փորձելու ժամանակ այլ անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույցում նշվում է, որ 2017թ. ընթացքում փաստագրվել է խտրականությամբ զուգորդված մարդու իրավունքների խախտումների 36 դեպք: Այդ դեպքերի մեծամասնությունը՝ շուրջ 77%-ը, պայմանավորված է անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ[52]:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը զուգորդվում է մարդու՝ մի շարք իրավունքների խախտումներով, մասնավորապես՝ խախտվում են կյանքի և առողջության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ազատ տեղաշարժի, կրթության, աշխատանքի իրավունքները[53]: ՀՀ-ում գործող մի շարք կազմակերպությունների և միջազգային տարբեր մարմինների կազմած զեկույցներից[54] պարզ է դառնում, որ Սահմանադրությամբ խտրականության արգելքի նախատեսումը բավարար չէ խտրականության դեպքերի բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն իրականացնելու համար, քանի որ մի կողմից դատարանները չունեն բավարար մասնագիտացում Սահմանադրության անմիջական կիրառում ապահովելու համար, մյուս կողմից բացակայում է նման դեպքերի քննության առանձնահատկություններով պայմանավորված արդյունավետ մեխանիզմներ նախատեսող օրենք: Արդյունքում, խտրական վերաբերմունքով պայմանավորված՝ մարդու իրավունքների ոտնահարումները չեն ստանում համապատասխան որակում, չեն քննվում որպես այդպիսին, չի իրականացվում դրանց դասակարգում և հաշվառում:

2017թ. Փինք Արմենիան արձանագրել է խտրականության դրսևորման դեպքեր իշխանական լիազորությունների ուղղակի օգտագործմամբ.

- Փինք Արմենիան Երևանի կենտրոնի գովազդային վահանակներին ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ հանդուրժողականության թեմայով սոցիալական գովազդային պաստառներ էր տեղադրել գովազդային գործակալի միջոցով: Քաղաքապետարանը գովազդային գործակալից պահանջել էր հեռացնել այդ գովազդային պաստառները: Պաստառները հեռացվել էին, և հետագայում այլ գովազդային գործակալները հրաժարվել էին տեղադրել պաստառները,
- Փինք Արմենիան դիմել էր մշակույթի նախարարություն, որպեսզի ԼԳԲՏ մարդկանց հանդեպ հանդուրժողականության թեմայով գովազդային պաստառներն և տեսահոլովակները սոցիալական ճանաչվեին: Մշակույթի նախարարությունը մերժել է գովազդները սոցիալական ճանաչելու դիմումը՝ հիմնավորելով, որ հասարակությունը տեղեկացված է «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում ունեցող անձանց գոյության մասին, որ գովազդները որևէ հանրային

---

[52] Տե՛ս՝ Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույց

[53] Տե՛ս՝ Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույց: «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը 2017թ.» զեկույց («Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ)

[54] «Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց իրավունքների ոտնահարումները Հայաստանում» զեկույց, 2012թ., «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013» զեկույց, 2013թ., «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2014» զեկույց, 2014թ., «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2015թ.» զեկույց, 2015թ., «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը 2016թ.» զեկույց, 2016թ., «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը 2017թ.» զեկույց, 2017թ. («Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ), Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույց, ՌԱԵՀ-Ի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ փուլ), 2016թ.

կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում:

Ներկայացված երկու դեպքերն էլ գտնվում են դատարանում:

Պետք է նշել, որ 2010թ. Եվրոպայի խորհուրդն ընդունել է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի հանձնարարականը, որով խորհրդի անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ստանձնել են պարտավորություններ.

- ուսումնասիրել առկա օրենսդրական և այլ միջոցները, վերանայել դրանք, հավաքել և վերլուծել համապատասխան տվյալները՝ վեր հանելու համար սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերով ուղղակի կամ անուղղակի խտրականության դեպքերը,
- ապահովել, որ օրենսդրական և այլ միջոցներն ընդունվեն և արդյունավետ իրացվեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերով խտրականության դեմ պայքարում, որպեսզի ապահովվի լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և խթանվի նրանց նկատմամբ հանդուրժողականությունը,
- ապահովել, որ խտրականության զոհերը լինեն տեղեկացված և ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հնարավորություն ունենան, ինչպես նաև որ խտրականության դեմ պայքարի միջոցները, անհրաժեշտության դեպքում, ներառեն պատժամիջոցներ խախտումների համար և փոխհատուցում խտրականության զոհերին[55]:

2017թ. ՀՀ արդարադատության նախարարությունը շրջանառության մեջ է դրել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որի 197-րդ հոդվածը խտրականությունը նախատեսում է որպես քրեորեն պատժելի արարք: Հոդվածը նախատեսում է պաշտպանված հատկանիշների բավականին ընդլայնված ցանկ՝ տալով հետևյալ ձևակերպումը. *«Խտրականությունը՝ մարդու իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, առողջական վիճակից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշումից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից (...)»*[56]:

Փինք Արմենիայի առաջարկին, որ պաշտպանված հատկանիշների շարքում անհրաժեշտ է ավելացնել նաև գենդերային ինքնությունը, քանի որ այդ հիմքով խտրականության դեպքերը իրենց քանակով և ծանրությամբ չեն զիջում սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեպքերին, արդարադատության նախարարությունը պատասխանել է, որ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը այդ խնդիրը լուծում է:

2018թ. սկզբին շրջանառության մեջ է դրվել նաև «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը[57], որտեղ պաշտպանված հատկանիշների շարքում կրկին չեն ներառվել սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը:

---

[55] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM / Rec (2010) 5 հանձնարարականը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցառումների մասին, 31.03.2010թ.
[56] ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, 2017թ., հոդված 197, 1-ին մաս
[57] «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 2018թ,, հոդված 4, 1-ին մաս

Միաժամանակ, ինչպես խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույցը, այնպես էլ ներպետական և միջազգային այլ զեկույցները և հանձնարարականները վկայում են, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը առավել տարածվածներից է Հայաստանում:

Հաղթահարելու համար ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը և կանխարգելելու համար խտրական վերաբերմունքի հետևանքով կատարված հանցագործությունները «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն կոչ է անում Հայաստանի Հանրապետությանը քայլեր ձեռնարկելու ի կատար ածելու ՀՀ ներպետական օրենսդրության մասը կազմող միջազգային պայմանագրերով և դրանց հիման վրա ընդունված ակտերով[58] ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ ընդունել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերով խտրականությունն արգելող իրավական ակտեր, նպաստել այդ հիմքերով խտրականության վերացմանը և հանդուրժողականության հաստատմանը:

[58] Ըստ ՀՀ Սահմանադրության (2015թ, փոփոխություններով) 5-րդ և 81-րդ հոդվածների՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերը պարտադիր իրավաբանական ուժ ունեն ՀՀ համար, իսկ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնել ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Հավելված 2

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով (ՍԿԳԻ) հանցագործություններ

Ատելության հիմքով հանցագործությունը սահմանվում է որպես քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելության կամ անհանդուրժողականության շարժառիթով[59]*:*

Այսինքն, ատելության հիմքով հանցագործություններն ունեն երկու բաղադրիչ՝ արարք, որն արգելված է քրեական օրենսգրքով, այսինքն՝ հանցագործություն և շարժառիթ՝ պայմանավորված անձի կամ անձանց խմբի որևէ իրական կամ ենթադրյալ հատկանիշով:

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի դիտարկումների համաձայն, ատելության հիմքով հանցագործությունները տարբերվում են քրեական հետապնդում ենթադրող այլ իրավախախտումներից հետևյալ հիմնական պատճառներով՝ քաղաքացիների իրավահավասարության խախտմամբ, տուժողի վրա ունեցած ազդեցությամբ, տուժողի ներկայացրած համայնքի վրա ունեցած ազդեցությամբ, պետության անվտանգության խնդիրներով[60]:

ՀՀ Քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը որպես հանցանքի պատասխանատվության ու պատիժը ծանրացնող հանգամանք նշում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը:

Այսինքն, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է արգելք այն ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ, որոնք պայմանավորված են ազգային, ռասայական կամ կրոնական ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ: Սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների արգելք ՀՀ քրեական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված չէ, ինչը հանգեցնում է գործերի ոչ լրիվ, ոչ բազմակողմանի և ոչ արդյունավետ քննության:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովը 2016թ. զեկույց[61] է պատրաստել Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, որտեղ անդրադարձ կա նաև անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված հանցագործությունների արդյունավետ քննությանը: Մասնավորապես, զեկույցում արտահայտված մտահոգությունը կապված է երկրում տիրող հետևյալ հիմնական խնդիրների հետ. օրենսդրական բաց, դեպքերի ոչ արդյունավետ քննություն:

Իդենտոբան և այլոք ընդդեմ Վրաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ ատելության հիմքով հանցագործությունը, որն իրականացվել է անձի սեռական կողմնորոշման հիմքով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու (հոդված 3) և խտրականության արգելքի (հոդված 14) իրավունքների խախտում է[62]:

---

[59] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), "Hate Crime Laws: A practical Guide", Warsaw, Poland 2009
[60] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), "Hate Crime Laws: A practical Guide", Warsaw, Poland 2009
[61] www.coe.int/t/dghl/monitoring/ecri/Country-by-country/Armenia/ARM-CbC-V-2016-036-ARM.pdf
[62] Identoba and Others v Georgia, no 73235/12, ECHR 2015

Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ատելության հիմքով հանցագործությունների դեպքում պետություններն ունեն արագ և համընդգրկուն քննություն իրականացնելու պարտավորություն, որը մի կողմից պարտավորեցնում է պետությանն ապահովելու, որ իր իրավասության տակ գտնվող անձինք չենթարկվեն ատելության հիմքով հանցագործությունների մասնավոր անձանց կողմից, մյուս կողմից՝ պարտավորեցնում է իրականացնել դեպքի քննություն ողջամիտ ժամկետներում[63]:

Դեռևս 2010թ. Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, միաձայն ընդունել են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի հանձնարարականը, որով ստանձնել են պարտավորություն՝ ձեռնարկելու համընդգրկուն, ներառյալ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ ՍԿԳԻ խտրականության դեմ պայքարի առիթով[64]:

Նույն հանձնարարականով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվել է՝

- ապահովել ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ, արագ և անկախ քննությունը,
- սահմանել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես ատելության հիմքով հանցագործության պատիժը և/կամ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք,
- խրախուսել ատելության հիմքով հանցագործությունից տուժած անձանց և վկաներին, որպեսզի իրավասու մարմիններին հաղորդեն նման հանցագործությունների և ատելության հիմքով այլ իրավախախտումների վերաբերյալ տվյալներ,
- փաստագրել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունները և ատելությամբ ու անհանդուրժողականությամբ պայմանավորված այլ իրավախախտումները:

2017թ. ՀՀ արդարադատության նախարարությունը շրջանառության մեջ է դրել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, որտեղ գործող օրենսգրքի 63-րդ հոդվածին փոխարինող 72-րդ հոդվածում արարքը ծանրացնող հանգամանքների վերոնշյալ դրույթը վերաձևակերպված է, ավելացված է հետևյալը. «...այլ սոցիալական խմբերի նկատմամբ, ատելության, անհանդուրժողականության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով կատարելը»:

Այսինքն, քրեական օրենսգրքում այսպիսի ձևակերպման առկայությունը թույլ կտա իրավապահ մարմիններին, անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների դեպքում դրանց տալ ճիշտ քրեաիրավական որակում և իրականացնել գործերի արդյունավետ, լրիվ և բազմակողմանի քննություն:

Օրենսդրական նման ձևակերպումը նվազագույն անհրաժեշտությունն է, որը, սակայն, բավարար չէ ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ քննության ապահովման համար:

---

[63] Nachova and Others v. Bulgaria, nos 43577/98 and 43579/98, ECHR 2005

[64] CoE Committee of Ministers, Recommendation CM/Rec(2010)5 of the Committee of Ministers to member states on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity, 1081st meeting of the Ministers' Deputies, 31 March 2010

Հարկ է նշել նաև, որ սույն զեկույցում քննարկված դեպքերից 9-ը քրեական օրենսգրքով արգելված արարք են՝ պայմանավորված տուժողների սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Դրանցից 7-ի դեպքում հարուցվել է քրեական գործ, սակայն արարքների քրեաիրավական որակման ընթացքում հաշվի չեն առնվել դրանց շարժառիթները:

Իրավապահ մարմիններին բողոք չներկայացված 2 դեպքերից մեկի տուժողը եղել է անչափահաս, որի շահերի պաշտպանությունն առանց օրինական ներկայացուցչի համաձայնության անհնարին կլիներ, իսկ երկրորդ դեպքում տուժողը գտնվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ և չի ցանկացել ավելի վտանգել իրեն:

Հավելված 3

Ընտանիքում բռնություն՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

2017թ. ՀՀ-ում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը:

Ընտանիքի՝ որպես հասարակության հիմնական բջջի կարևորությունը, ընտանիքի անդամների իրավունքների իրացման անհրաժեշտությունն են փաստում նաև ՀՀ սահմանադրության 36-րդ և 37-րդ հոդվածները՝ հիմնական օրենքում համապատասխանաբար սահմանելով ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները[65]:

Ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև[66]: Ընտանիքում բռնության տեսակներն են՝

1. ֆիզիկական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.
2. սեռական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.
3. հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.
4. տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.
5. անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացա-

[65] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, հոդված 36՝ ծնողների իրավունքները և պարտականությունները, հոդված 37՝ երեխաների իրավունքները

[66] «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017թ., հոդված 3, 1-ին մաս

ման, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են[67]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Օպուզն ընդդեմ Թուրքիայի որոշմամբ տրված մեկնաբանության համաձայն՝ ընտանեկան բռնության խնդիրը, որը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ ֆիզիկականից մինչև հոգեբանական բռնություն կամ վերբալ չարաշահումներ, (...) հիմնական խնդիր է, որն առնչվում է բոլոր անդամ պետություններին և որը ոչ միշտ է հայտնվում մակերեսին, որովհետև հաճախ տեղի է ունենում անձնական հարաբերությունների կամ փակ շրջանակի դաշտում, և միայն կանայք չէ, որ տուժում են: ՄԻԵԴ-ը ընդունում է, որ տղամարդիկ նույնպես կարող են լինել ընտանեկան բռնության զոհեր: Իրականում՝ երեխաները ևս հաճախ այս երևույթի զոհերն են՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն[68]:

2017թ. Փինք Արմենիան սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքության հիմքով արձանագրել է ընտանեկան բռնության 8 դեպք[69]: Ընտանեկան հարաբերություններում անձնական կապերը գերադաս դիրք ունեն գույքային հարաբերությունների նկատմամբ: Առավել արժևորված է մարդկանց հոգևոր և/կամ ազգակցական կապը: Ընտանեկան բռնության պարագայում անձը խոցելի է ոչ միայն այն պատճառով, որ առկա է դրսում հայտնվելու, ֆինանսական դժվարությունների վտանգ, այլև դժվարանում է սահմանադրական իրավունքների իրացումը, քանի որ պատասխանատվության ենթակա սուբյեկտները տուժողի ընտանիքի անդամներն են: Վերը քննարկվածը, ինչպես նաև այլ դեպքերը փաստում են, որ անձինք խուսափում են իրավապահ մարմիններին դիմել, քանի որ կա վտանգ առավել խորացնելու կոնֆլիկտը, ուժգնացնելու բռնության կամ ճնշումների թափը, նաև անձը չի ցանկանում ընտանիքի անդամների վերաբերյալ հաղորդում ներկայացնել: Այսինքն՝ այս պարագայում խոչընդոտները ինչպես օբյեկտիվ (ճնշումների ուժգնացում, կոնֆլիկտի սրում), այնպես էլ սուբյեկտիվ (ընտանիքի անդամների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու ցանկության բացակայություն) բնույթ ունեն, և քննարկվող խնդիրը պահանջում է համալիր մոտեցում: Ընտանիքում բռնության դեպքեր արձանագրվելու պարագայում ներգրավվում է Փինք Արմենիայի սոցիալական աշխատողը, որը սոցիալական աջակցություն է տրամադրում թե՛ տուժողներին, թե՛ ընտանիքի անդամներին:

Ընտանիքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունները դրսևորվում են նաև ԼԳԲՏ անձանց մի շարք սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերով սահմանված իրավունքների խախտումներով, մասնավորապես՝ ընտանիքի անդամները անձի սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության մասին տեղեկանում են նրա անձնական նամակագրությունը կարդալիս, որն անձի նամակագրության գաղտնիության իրավունքի խախտում է[70]:

«ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը 2017թ.» զեկույցում ներկայացված դեպքերում ընտանեկան բռնությունն ուղեկցվել է նաև այնպիսի սահմանադրական

---

[67] «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017թ., հոդված 3, 2-րդ մաս:
[68] Օպուզն ընդդեմ Թուրքիայի, 09.07.2009, §132:
[69] Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի՝ 2017թ. զեկույց, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը 2017թ.» զեկույց («Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ)
[70] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, հոդված 33, 1-ին մաս

իրավունքների և ազատությունների ոտնահարումներով, ինչպիսիք են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի, անձնական ազատության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, հաղորդակցման ազատության և գաղտնիության իրավախախտումները: Նշված իրավունքներն ու ազատությունները փոխկապակցված են:

ՄԻԵԴ-ն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը՝ սահմանելով, որ «մասնավոր կյանքը» կոնցեպտ է, որն իր շրջանակներում պարունակում է անձի ֆիզիկական և բարոյական ամբողջականությունը՝ ներառյալ սեռական կյանքը[71]: Այս դիրքորոշումը վերահաստատվել է մեկ այլ որոշմամբ ՝ հավելելով, որ մարդու մարմինը մասնավոր կյանքի ամենաինտիմ ասպեկտն է[72]:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք[73], ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք[74], անձնական ազատության իրավունք[75]:

Հետևաբար՝ մարդու գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը ներառվում են մասնավոր կյանքի շրջանակներում և համապատասխանաբար օգտվում պաշտպանությունից: Անձանց անձնական ազատության սահմանափակման դեպքերը չեն համապատասխանում սահմանադրությամբ նախատեսված պայմաններին: Ոտնահարվել է նաև հաղորդակցության գաղտնիության իրավունքը և այս ամենը հաշվի առնելով՝ ընտանիքի անդամները ապօրինաբար ներխուժել են մասնավոր կյանքի «տարածք»: Քննարկվող հիմքերով ընտանեկան բռնության ենթարկված անձինք հայտնվում են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆիզիկական, հոգեբանական և տնտեսական բռնության ռիսկային գոտիներում, և անգամ այս պարագայում ուղղակի նորմերի բացակայությունը մեկնաբանող սուբյեկտին լայն հնարավորություններ է ընձեռում: Ընտանեկան կյանքում ծագող խնդիրները պահանջում են համալիր մոտեցում. իրավիճակին առավել բավարարող լուծում տալու համար անհրաժեշտ է ուսունասիրել ոչ միայն կոնկրետ իրավիճակը, գնահատել պատճառված վնասը, այլև ուշադրություն դարձնել բռնության պատճառներին ու հիմքերին՝ տուժածներին պատշաճ պաշտպանությամբ ապահովելու նպատակով:

Ներկայացված և նմանատիպ այլ իրավիճակները բացառելու կամ նվազագույնին հասցնելու համար անհրաժեշտ են ամրագրված և գործող իրավական մեխանիզմներ, որոնք ուղղակիորեն կարգելեն և կսանկցավորեն ընտանեկան բռնությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերով: Հիրավի կատարված իրավախախտումներն ընդգրկվում են նաև մեր նշած իրավունքների ոտնահարման շրջանակներում: Այնուամենայնիվ իրավական կոնկրետության մակարդակի բարձրացման, ինչպես նաև մեկնաբանական տարակարծություններից խուսափելու լավագույն մեխանիզմն արված առաջարկն է:

[71] X և Y ընդդեմ Նիդերլանդների, 26.03.1985, §22
[72] Y.F-ն ընդդեմ Թուրքիայի, 22.10.2003, §33
[73] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, հոդված 31, մաս 1-ին
[74] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, հոդված 25, մաս 1-ին
[75] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, հոդված 27, 1-ին մաս, 1-ին նախադասություն

«Հանրային տեղեկատվություն
և գիտելիքի կարիք»
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277